

ԵՐԿՈՒ ՈՒՂՂՈՒՄ ԿՈՐՅՈՒՆԻ ՄԵՋ

1.

Նկարագրելով Մեսրոպի վերջին օրերի կյանքը, Կորյունը պատմում է թե ինչպես նա գիշեր ցերեկ խրատում էր բոլորին, մանավանդ երբ զգում էր, որ մոտ է իր մահը, է՛լ աչքերին քուն չէր տալիս. «Մանաւանդ զի և զմտաւ իսկ ածէր ըստ տէրունական հասակին զօր վախճանին, չտայր քուն աչաց և ոչ նիրհ արտեանաց» (Կորիւն, տպ. Վենետիկ, 1894, էջ 43):

Տէրունական բառը նշանակում է «աստվածային, քրիստոսական» և գործ է ածված միայն աստուծու և Քրիստոսի համար. ասվում է, օրինակ՝ տէրունական հրաման, տէրունական գիրք (Աստվածաշունչ), տէրունական սեղան, տէրունական տուն (տաճար), մարմին տէրունական (Քրիստոսի մարմինը), տէրունական լանջք, ուտք (Քրիստոսի լանջքը, ոտքը), աղօթք տէրունական (Հայր մեր), տէրունական օր (Կիրակի), տէրունական պատուէր (Քրիստոսի պատուէրը) և այլն և այլն: Այս բոլորի վկայությունները տես Նոր Հայկ. բառ. հա. Ի, էջ 872: Սովորական և հասարակ բաների համար բնավ չի դործածված տէրունական, ուստի անհարմար է այստեղ Մեսրոպի համար ասել տէրունական հասակ, որ է «աստվածային հասակ»:

Ըստ իս բառը պետք է ուղղել ծերունական, որ գործածված է ուշ ժամանակի գրականության մեջ. վկայությունները տես Նոր Հայկ. բառ. հա. Ա, էջ 1014, ուր կա նաև ծերունական հասակ (Կիրդ. յովել.): Սխալն առաջացել է Տ և Ծ տառերի նմանությունից, որ գրիչները շփոթել են իրար հետ:

Թե Կորյունի իսկական բնագրում բառը ծերունական ձևն ունէր, ապացուցում է նաև Փոքր-Կորյունը, որ համապատասխան տեղում ունի «ծերունի հասակ»:

Այսպիսով մենք ունենում ենք Ոսկեդարյան մի բացատրություն. (ինչպես տե՛ր, տերունի բառից կա տերունական, նմանապես ծեր, ծերունի բառից էլ ծերունական):

Ֆնտգլյանն իր Կորյունի քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 63) ոչ մի ուշադրություն չի դարձրած վերի տերունական բառի անպատեհության վրա և ողահել է անփոփոխ:

2.

Կորյունի պատմության մեջ թվական մի անճշտություն կա: Կորյունը (տպ. Վենետիկ 1894, էջ 17) պատմում է թե Դանիելյան նշանագրերը Վռամշապուհի հինգերորդ տարին Հայաստան բերվեցին. «ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր»: Մեսրոպն այդ տառերը

փորձեց երկու տարի. «Իրրե ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր ե նովին նշանագրովք տանէր»: Այնուհետեւ Մեսրոպը տեսնում է, որ թերի են այդ տառերը և մեկնում է Միջագետք՝ նոր խուզարկութիւններ կատարելու համար, դարձյալ Վռամշապուհի հիմնգերարդ տարին. «խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապուհոյ արքային Հայոց» (էջ 18): Եղեսիայում և Սամուսատում մի ժամանակ աշխատելուց հետո, հայերեն սառերը գտած դառնում է Հայաստան «ի վեցերորդ ամի Վռամշապուհոյ արքային Հայոց մեծաց»:

Ամեն մի ընթերցողի համար էլ հայտնի է, որ երկու հիմնգերարդ-ներից մեկը սխալ է: Բանասերները զանազան բացատրութիւններ են տվել սխալ ուղղելու համար: Ոմանք առաջին հիմնգերարդ-ը պահում են անփոփոխ, և որովհետեւ Դանիելյան նշանագրերի փորձարկութիւնը երկու տարի տեկց, երկրորդ հիմնգերարդ-ը դարձնում են Խօքներարդ, ասելով թե Խ (5) ե Խ (7) տառերը շատ հեշտ էր շփոթել: Բայց այս դեպքում հաջորդ վեցերարդ բառն էլ պետք պիտի լիներ փոխել ութերարդ: Ուրիշներն այսքան փոփոխութիւնը շատ համարելով, Կորյունի «ամս երկու» բացատրութիւնը դարձնում են ամիս երկու, որով բոլոր մյուս թվերը մնում են անփոփոխ: Marquardt (Պատմութիւն հայերէն նշանագրերու, Վիեննա 1913, էջ 27) Կորյունի սույն հատվածից «և իրրե ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր» բառերն ամբողջովին հետին լուսանցագրութիւն է համարում և ջնջում է, որով դարձյալ երկու հիմնգերարդ-ները կմնան, ենթադրելով թե փորձարկութիւն միջոցը շատ կարճ էր: Օրմանյան (Ազգապատում, Պոլիս 1912, հտ. Ա, էջ 277) մասնանշում է սխալը, բայց ոչ մի փոփոխութիւն չի առաջարկում, ասելով թե «թուականներու յարմարութեանց համար աւելի երկարելը ձանձրալի կընայ դառնալ»: Գալուստ Տեր Մկրտչյան (Արարատ 1912, էջ 508 և 511) նկատում է սխալը, առաջին հիմնգերարդ-ը համարում է ուղիղ, երկրորդն անորոշաբար գրում է «հի...երորդ», իսկ վեցերարդ-ը դարձնում է ԺԶ (փոխանակ Զ. այսինքն 16-րդ տարին՝ փոխանակ 6-րդի): Բայց այնուամենայնիվ երկու տարվա հաշիվը մնում է առանց բացատրութիւն: Ֆնտզլյան՝ Կորյունի քննական հրատարակութիւն մեջ (Երուսաղեմ 1930, էջ 18) սխալ է համարում երկրորդ հիմնգերարդ-ը, որովհետեւ, ասում է, «Դանիելյան նշանագիրներուն յանկարծագիւտ հասնիլն աւելի տպաւորիչ ըլլալով՝ ժամանակն աւելի ճշտիւ պահուած ըլլալու է»: Կարծես թե սխալը Կորյունը կատարած լիներ և ոչ թե հետին գրիչները: Այնուամենայնիվ, էջ 21, վեցերարդ բառն անփոփոխ պահում է:

Ես էլ պիտի առաջարկեմ մի փոքրիկ ուղղում, որով՝ կարծում եմ թե բոլոր անդատեհութիւնները հեշտութեամբ պիտի վերանան:

Անփոփոխ պահում եմ Կորյունի վեցերարդ-ը, երկու ամ-ը և երկրորդ հիմնգերարդ-ը. իսկ առաջին հիմնգերարդ-ն ուղղում եմ երրարդ: Սխալն առաջացել է հետևյալ ձևով: Կորյունի ձեռագրում գրված է եղել երդ (համառոտագրված և առաջին տառի վրա պատվի նշանով), որ ընականաբար պիտի կարդացվեր «երրորդ»: Մի խեղճ գրիչ, վրան պատիվ դրած ե-ը թվանշան համարելով՝ կարդացել է հիմնգերարդ: Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձևով, առանց անդրադառնալու թե 5-2 չի տալ 5: